

Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ Ա Կ Ա Ն

Ժամանակակից երիտասարդի խոստովանութիւնը. — Բժեկի օրագիրը — Բժեկի պարտաւորութիւնները. — Մասեմախօսութիւն. — Բժեկական քրոնիկոն. բժշկական մի նոր մեքենայ. ինչից է կախած քունը. կաթը ներկայանում է բարակացաւի վարակման ամենագլխաւոր սկզբնապատճառը. գիտնականի հերոսական փորձը: Այլ եւ այլի:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԳԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄԻ ԻՆՆԵՐ

Պաղկազարդի հանդիսաւոր կերակին էր. Առաւօտեան ժամերգութիւնը վերջացել էր և ժամաւորները մի մի կանաչ ուռ ձեռքներին տուն էին վերադառնում, թէ նրանով շնորհաւորելու իրանց ընտանիքին օրաց տօնի առթիւ և թէ՛ յետոյ ամուր պահելու այդ ուռը սենեակի մի բարձր անկիւնում*): Եկեղեցու բակը թնդում էր երեխաների ու պատանիների աղաղակները, փայտէ ու թիթեղեայ ճոխիկների զնգոցից ու ճռնչիւնից. ամենքն էլ խօսում էին, ծիծաղում, այս ու այն կողմը վազվզում. այդ ժամանակ կեանքը եռում էր այնտեղ, ուր սովորաբար միշտ լուռութիւն է թագաւորում. Թէև պատարագը յետաձգել էր, բայց եկեղեցու ներսը ևս դատարկ չէր. այդ օրը հաղորդողների մեծ բազմութիւն կար հաւաքուած խորանի առաջ. Ամեն մէկը հերթով մտնում էր խորանը, ուր գտնուում էր խոստովանահայր քահանան, և խոստովանելուց յետոյ դուրս գալիս: Ամենքն էլ անհամբեր սպասում էին իրանց հերթին. միայն մէկը նրանցից առանձնապէս չէր շտապում. նա սպասեց մինչև ամենքն էլ գնացին և հերթը վերջում հասաւ իրան: Նա մի երիտասարդ էր մօտ երեսուն և հինգ տարեկան, թէև տժգոյն զէժքը և նրան պատած վաղաժամ կնճիռներն ու թախճալի արտայայտութիւնը նրան աւելի տարիքաւոր մարդու տեսք էին տալիս: Նա անհատաւ քայլերով մտաւ խորանը, չըմռռանալով իր յետևից ամուր փակել գուռը, լուռ չոզեց խոստովանահօր առաջ, համբուրեց նրա աջը և գետնին դրած բաց ժամազրքի վրայ սկսեց կարգալ «Մեղաց» աղօթքը. նրա ձայնը խեղդաւած էր, նւազ, դողդոջուն և նա կարգում էր մեքենայաբար, առանց զգալու. երևում էր, որ այդ րոպէին նրա միտքը բոլորովին հեռու էր թռչում և միայն այն ժամանակ էր նա փոքր ինչ սթափուում, երբ իր չՄեղաց

*) Կարծում են, որ եթէ այդ օրհնած ուռը ձգեն տաք ջրի մէջ և յետոյ այդ ջրով լողացնեն դող-երոցք ունեցող հիւանդի, նա կըբժշկուի:

Աստուծոյ» խօսքին հետևում էր քահանայի միակերպ «Աստուծ թողութիւն շնորհեսցէ» պատասխանը:

Երբ նա վերջացրեց մեղայականը, քահանան դարձաւ նրան այս հարցով.

— Ի՞նչ ունիս ասելու, որդեակ, գուցէ մի բան ծանրանում է խղճիդ վրայ, աւա, դատարկիր սիրտդ, զղջան և դրանով միայն կըթեթեանաս:

— «Տէր հայր, — ասաց նա փղձկուն և չուզմունքից դողողացող ձայնով, — Այո, շատ կարևոր բան ունիմ ասելու. շատ մեծ ոճիր է ծանրանում սրտիս վրայ. ոճիր, որ ես թագցրի իմ կրճքում երկար տարիներ և որ սակայն այժմ էլ թագցնելու ոչո՛ր չունեմ: Նա պատուում է կուրճքս, այրում է լեզուս. ես պէտք է վերջապէս խոստովանեմ, սակայն նա մի ամբողջ պատմութիւն է. իմ մեղքերիս պատմութիւնը շատ երկար է, լի ամենատեսակ զզուելի արկածներով. նա միևնույն ժամանակ իմ երիտասարդութեանս պատմութիւնն է. — Այգտեղ նա մի փոքր կանգ առաւ, հպաց, թուքը կուլ տուց, կարծես դժարանում էր միանգամից սկսել իր խոստովանութիւնը և ուզում էր փոքր ինչ ժամանակ վաստակել, համարձակութիւնս պտանալու համար. ապա շարունակեց. — Խիստ վաղ բացեցան իմ աչքերս. և ես 12 տարեկան հասակումս արդէն ընդ միշտ մնաս բարեւա ասացի իմ անմեղ մանկութեանս: Իմ մեղքերիս այդ առաջին քայլերի համար սակայն ես ինձ այնքան չեմ մեղադրում. անհեռատես ծնողներիս ու ազգականներիս անզգոյշ խօսակցութիւնները իմ ներկայութեամբ, մանաւանդ երեկոները իմ անկողնիս մօտ, երբ ես կէս-քուն դրութեան մէջ լսում էի նրանց անվերջ դատարկաբանութիւնները. մեր տան ծառաների ու աղախիւների ժպիտները, ակնարկները ու միմեանց հասցէին երկդիմի լսութեքը, անհամեստ կատակները, դրսում փողոցային տղաների սոսկալի հաչոյանքները, իսկ ուսումնարանում իմ, տարիքով ինձանից մեծ, ընկերներիս անպատկառ անեկդօտներն ու լկտի գարձախօսութիւնները շատ վաղ բացին իմ սչքերս, գայթակղեցրին ինձ ու շեղեցին ուղիդ ճանապարհից. ես ևս անմիտ կերպով անձնատուր եղայ այն անտին, որը բռնացել էր իմ հասակակից համարեա բոլոր պատանիների սրտերի վրայ և նրանց իր ստրուկը դարձրել. ես չեմ համարձակում նրա անունը տալ, բայց նա այնպէս յայտնի է ամենքին: Նա նման է այն բազմազխեան վիշապին, որի կտրած մի գլխի տեղ, ըստ աւանդութեան, աճում են երկուսը և աւելի, և որը իր ճիրաններում ճմլում է ամեն կենդանութիւն. առողջ մարդկանց օրօրուդ դիակներ է դարձնում և ծաղիկ երիտասարդներին վաղաժամ գերբուծուկիւնում են և նրա ձեռքից վերջապէս ազատուցներ, սա-

կայն նրանք էլ իրանց ամբողջ տանջալից կեանքի ընթացքում նմանում են միայն այն ծխող աւերակներին, որոնց կիսաբանգ մրոտ պատերն են կանգուն մնացած լինում կործանիչ հրդեհից չետոյ, կարծես իրանց նախկին փառքը ողբալու համար: Այդպէս էի և ես: Մինչև 20 ամեայ հասակս միայն այդ գգելի ախտի մէջ էի բաւականութիւն գտնում, ինձ համար գոյութիւն ունէր միայն իմ հիւանդոտ երևակայութիւնը, որը անդադար ստեղծում էր իմ ուղեղում միմիայն վավաշոտ պատկերներ և նա ինձ համարեա մի անկենդան ուրւական դարձրեց: Ես գգում էի կեանքից. ես վախենում ու ամաչում էի մարդկանցից, երբ նրանք իմ դէմքիս էին նայում. ես գգում էի իմ ջանցանքիս ամօթն ու սարսափը, սակայն նրանից ազատւել չէի կարող: Ես նմանում էի այն թռչնիկին, որը զարհուրում է իրան թոժով օձի աչքերից, իսկ փախչել չէ համարձակում: Այնուամենայնիւ դա ջանցանքիս դեռ առաջին աստիճանն էր, որն ուղղած էր միմիայն իմ անձիս ֆիզիքական ու բարոյական առողջութեան դէմ. այդ ջանցանքով ես առաւելապէս ինձ էի սպանում: Եկաւ շուտով երկրորդ շրջանը, երբ երևակայութեանս ստեղծած տափոտ պատկերները ես սկսեցի որոնել ու գտնել կեանքի մէջ: Երևակայական գրգիռը ես անպատճառ ուզում էի զգայական ու մարմնական դարձնել և սկսեցի կին որոնել իմ գրգուած կրքերին բաւականութիւն տալու համար. իրական սեռը դրաւեց իմ ամբողջ սիրտս ու հոգիս: Քսանամեայ հասակիցս ես սկսեցի սեռական յարաբերութիւններս կանանց հետ, այն անձնավաճառ և անբարոյ կանանց հետ, որոնք միմիայն զբաղւած են այդ արեստով: Այդ բանը ինձ խորհուրդ տւին և յարգելի բժիշկները, որոնց ես դիմեցի իմ արատից փրկելու համար. փորձանքից ազատելու համար նրանք ինձ պատուհասի մէջ գլորեցին: Բթացաւ իմ մէջ սիրոյ սրբազան զգացմունքը, տեղի տալով անասնական զգայականութեան և ես ագահօրէն նետում էի անխտիր բոլոր կանանց գիրկը, իմ ամենամեծ բաւականութիւնս դրա մէջ որոնելով: Այդ ասպարիզում ևս ես չափը անցկացրի և պատժեցի: Մինչև 27 տարեկան հասակս ես արդէն գործնականապէս իմ անձիս վրայ ծանօթացել էի սեռական ամեն տեսակ հիւանդութիւնների հետ և երբ արդէն բաւական չափեցել էի, տանջել ու հիւժւել, այն ժամանակ վերջապէս վճռեցի թողնել այդ կեանքը և, որ ամենահրէշաւորն է, ամուսնանալ, այն էլ մի անարատ, մանկահասակ աղջկայ վրայ... Այդ էլ արդէն իմ մեղքիս երրորդ ամենաճանր ու աննեղելի մասն է կազմում: Բաւական չէր որ ես սպանել էի ինձ ֆիզիքապէս ու բարոյապէս, բաւական չէր որ ես 15 տարի շարունակ ապրել էի տղմի մէջ, ինձ նման թեթեւաբարոյ անհատների շրջանում, այժմ էլ ես ուզում էի սպանել և մի անմեղ հրեշտակի: Այն, այն ժամանակ ես դեռ այնքան միամիտ էի, որ կարծում էի թէ հեշտութեամբ կըմոռացի իմ սև անցեալը և ես ընտանեկան կեանքում բախտաւոր կըլինեմ: Որպիսի կարճամտութիւն: Ես ամուսնացայ. իմ կինս մի համեստ ու անմեղ աղջիկ էր, միամիտ, անարատ, կատարեալ հրեշտակ: Թ', ինչ ջերմ սիրով էր նա սիրում ինձ. որքան քաղցր էին նրա ժը-

պիտները, գգւանքները, փաղաքշանքը. ես այժմ էի միայն հասկանում ընտանեկան կեանքի քաղցրութիւնը. ես այժմ էի հասկանում թէ ինչ է իսկական սէրը, ամուսնական բախտաւորութիւնը: Սակայն մենք անհամապատասխան էինք միմեանց. կնոջս սրտում արագ բռնկում էր սիրոյ հուրը, իսկ իմ խարխուլ կրծքիս տակ միայն հանգած մոխիր էր մնացել և կինս իր սիրաբորբոք զրկում մի հիւժւած դիակ էր սեղմում: Ես այժմ էի հասկանում իմ աննեղելի սխալները և շատ ու շատ ողբում այն ամեն կորցրած ոչժերիս համար, որոնց ես վատնել էի այնքան անխնայ կերպով: Մեր բախտաւորութիւնը շատ կարճատև եղաւ, մի քսնի ամիս միայն: Կաշախ տակ թագնւած հիւանդութիւնները, որոնք բոլոր էին դրել իմ մարմնիս մէջ իմ անառակ կեանքի ժամանակից և որոնցից ես ինձ արդէն բժշկւած էի համարում, շուտով նորից սկսեցին արտայայտել: Նորից դիմեցի բժիշկների օգնութեան, սակայն ես արդէն վարակել էի խեղճ կնոջս: Նա ընկաւ տըխուր, մտահոգ գրութեան մէջ. ժպիտները և ծիծաղը անչետացան նրա երբեմն վարդագոյն դէմքից, որը հիւանդոտ ու դալկահար էր դարձել. այժմ նրա գունատ այտերն ու ճակատը վշտի մուգ կնիք էին կրում, իսկ ցաւերի տակ հեծող կրծքից միայն հառաչանքներ էին դուրս թռչում: Երկար ժամանակ նա ամաչել էր և չէր համարձակել յայտնել ինձ իր ցաւը, վախենալով դրանով վշտացնել ինձ, և այդպիսով ցաւը խորին արմատներ էր հաստատել նրա մէջ: Այն, եթէ նա իմանար, որ այդ բոլոր տանջանքների միակ պատճառը ես էի, որ այդ բոլոր ցաւերը ես էի պատուաստել նրա մէջ իմ հրէշաւոր, զժոխային սիրոյ օգնութեամբ: Իսկ նա այդ չըզիտէր և ես էլ երբէք չըխոստովանեցի նրան այդ բանը. դա ինձ համար սարսափելի էր, իմ ուժից շատ վեր. ես գգում էի նրա ֆիզիքական տանջանքները և ինքս էլ բարոյապէս տանջում էի նրանից ոչ պակաս: Այդ դեռ բաւական չէր. երկինքն աւելի անողոք պատիժ էր նշանակել ինձ համար: Երեք անգամ կինս չղացաւ և ամեն անգամ էլ կամ վիժում էր լինում, կամ օրապակաս ծնունդ, որը շուտով մեռնում էր: Բժիշկները դարձեալ օգնութեան հասան և ահա այս երրորդ անգամն է որ նա ծննդաբերում է թէև ողջ զաւակներ, սակայն նրանք ևս աւելի լաւ կըլինէր որ չըծնւած մեռնէին: Նրանք ապրում ու մեծանում են միայն իմ մեղքերս իւրաքանչիւր բոլոր չիշեցնել տալու համար: Թշառ արարածներ են դրանք. մեծը վեց տարեկան է և բունւած հոգեկան հիւանդութեամբ. միջակը չորս տարեկան—սա էլ համր ու խուլ է, իսկ փոքրը հազիւ երկու տարեկան և ծնւած օրից մարմինը վերքերով ու խոցերով է ծածկւած, որոնք այնպէս զգուցի են դարձնում նրան: Կինս բոլորովին հիւժւել ու մաշել է. նա ամեն օր անիծում է կեանքը, բայց մեռնել չէ կարողանում: Մեր ընտանեկան օջաղը մի դժոխք է դարձած, որի մէջ այրում ենք ես և իմ ձեռքով թշառառացած կինս ու զաւակներս: Այժմ եմ ես միայն զգում և շատ դառն կերպով, սակայն այլևս տարածամ է այդ զղջումը: Անբուժելի ցաւերից մեզ այլ ևս փրկութիւն չըկայ. խորտակւած է մեր կեանքը և ուրախութիւնը. սուգն

ու տանջանքն են մեր բաժինը: Չատ անգամ է մաքուս անցնում ինքնասպանութեամբ վերջ տալ այս տանջանքներին, բայց երբ թոչնի բաժակը մօտեցնում եմ շրթունքներինս, թշուառների մի հայեացքը բռնում է ձեռքս և ես պարտք եմ համարում ապրել իմ գոհերին խնամելու համար: Երբեմն էլ ուզում եմ սպանել նրանց բոլորին, այդպիսով միայն կարող եմ թեթևացնել իրանց տանջանքը, և չետոյ էլ վերջ տալ իմ կեանքիս, սակայն այդ ևս չեմ համարձակում: Ախ, թեթևամիտ պատանեկութիւն. անմիտ, զգուշի և յանցաւոր երիտասարդութիւն, միթէ սրբանից էլ աւելի դառն պտուղներ կարող էք արտադրել դուք:

Խոստովանողը վերջացրեց իր ասելիքը, և ա լուեց սպասելով քահանայից չանդիմանութիւն, խրատ կամ պատիժ. իսկ սա ոչինչ չունէր նրան ասելու: Զոջումը խիստ թաւաժամ եր. այլ ևս ոչինչ չէր օգնիլ. գոհերը և չանցաւորը պէտք է ցմահ տանջւէին. նրանց դատավճիռը կարդացած էր: Քահանան շատերից էր լսել այսպիսի խոստովանութիւններ և նա լաւ գիտէր, որ սա ոչ առաջինն էր, և ոչ էլ վերջինը: Այդպիսի անցեալ են ունեցել ժամանակակից երիտասարդներից շատ շատերը և այդպիսի էլ բախտ է դրոշմւած նրանց ամենքի ճակատին:

Քահանան միայն լուռ հոգոց քաշեց և ապա շտապով թողութիւն տւեց նրան: Խոստովանողը դուրս դրնաց խորանից և նրան փոխարինեց ուրիշը:

Ն օ ս ա Ր

Բ Ժ Ղ Կ Ի Օ Ր Ա Գ Ի Ի Ը

III ԱԶԱՎԵՐՏԻ ԱՌՈՂԱՍՊԱՅՈՒԹԻՒՆԸ

(Ա.ԽԵՉ).

5. Տանը գրադուռնների առողջապահութիւն

- 1) Պատուհանը կամ լապտերը պէտք է քեզ լոյս տան քո ձախ կողմից:
- 2) Գիր գրելիս այնպէս դիր աթոռդ, որ նրա նրստատեղիի առաջի ծայրը մի 2—5 սանտիմետր (մի վերջոկ) սեղանի տակը ընկնի: Նստիր առանց կռանալու և կուրծքդ սեղանից ափին չըսեղմես:
- 3) Աթոռդ այնպիսի բարձրութիւն պիտի ունենայ, որ արմուկներդ սեղանից հետ հաւասար բարձրութեան վրայ լինին: Իսկ եթէ աթոռդ (սա շատ է պատահում) շատ ցածր է, տակդ դիր մի բարձ կամ թէ մի ուրիշ հաստ բան:
- 4) Ոտներդ չատակի վրայ դիր. իսկ եթէ նրանք չեն հասնում չատակին, մի փոքրիկ բան դիր ոտներիդ տակ, որ չենւես նրա վրայ ոտներովդ:
- 5) Այնպէս չընստես որ ոտդ ոտի վրայ լինի (ճունկդ ճնկանդ վրայ) նմանապէս և ոտներդ աթոռից տակ չըճայես:
- 6) Աթոռիդ վրայ նստիր ուղիղ, չենւիր նրա մէջքի վրայ և գլուխդ շատ քաշ մի գցիր:
- 7) Ուսերդ մինչև արմուկներդ պէտք է սեղանից

վրայ լինին. ձախձեռքով թուղթը բռնիր և ինչքան հարկաւոր լինի գրելիս՝ թուղթդ դէպի վերը բարձրացրու:

8) Թուղթը ուղղակի կրճքիդ առաջ պիտի լինի, նրա միջից մի քիչ դէպի աջ:

9) Կարգալու ժամանակ աթոռդ սեղանից հեռացրու և գիրքդ պինդ պահիր երկու ջեռքովդ մի քիչ թեքած, այնպէս որ նրա վերին ծայրը ներքինից բարձր լինի. այս վերջինս պէտք է սեղանից դէմ տւած լինի:

10) Աչքերիդ և գրքից միջի տարածութիւնը պէտք է ամենապակասը 32 սանտիմետր լինի (7—8 վերջոկ):

11) Աղջկերբը պէտք է ուշ դարձնես, որ շրջազգեստը (իւպկան) աթոռի նստատեղիի վրայ հաւասար լինի փուած: Այս նպատակով աղջկերբը աթոռի վրայ նստելիս, չըպէտք է (ինչպէս առհասարակ անում են) շրջազգեստը ձեռքով դէպի աջ կամ ձախ քաշքշես:

6. Մարմնի առողջապահութիւն

1) Մաքուր օդը և արեգակի լոյսը անպայման հարկաւոր են առողջութիւնը պահպանելու համար, ուրեմն պէտք է ամեն կերպ աջխատել որ նրանք ազատ մտնեն բնակարանի մէջ:

2) Պէտք է քեզ ամրացնես, ամենայն օր պաղ ջրով լւանալով ամբողջ մարմինդ, կամ գոնէ մարմնիդ վերին մասը: Որպէսզի մարմինդ մաքուր մնայ, շաքաթը մի անգամ եթէ հնարաւոր է, լողացիր տաք ջրում:

3) Տարւալ տաք եղանակին լողացիր ազատ օդում, ազատ ջրում—լաւ կըլինի երբ այս վերջինս արևի ճառագայթներից արդէն տաքացած լինի: Քրում տասը րոպէից աւելի չըմնաս, յետոյ լաւ չորացրու քեզ ու սկսիր ման գալ (հազուստդ նեղ չըլինի) որպէսզի տաքանաս: Եթէ եղանակը մեղմ է և տաք՝ լողանալուց յետոյ, եթէ կարող ես, մի քիչ մնա մերկ, որ մարմինդ ենթարկի մաքուր օդի և արեգակի ճառագայթների ուղղակի ազդեցութեանը:

Լողանալու ամենալաւ ժամանակը առաւօտն է— ժամի 8-ից սկսած և երեկոյեան: Չըպէտք է լողանալ կէսօրին, ամենաշոք ժամանակ, նմանապէս և չի կարելի լողանալ ճաշից կամ թէ ընթրիքից յետոյ: Պատահում են շատ վնասներ, հէնց նրա համար որ այս վերջ չիշած պայմանները չեն կատարում: Լողանալուց առաջ չէ կարելի մերկ նստել բաց օդում, որովհետև քրտնած մարմինը շատ շուտ է հովանում և սրանից մրսում են: Հէնց որ շորերդ հանեցիր, իսկոյն գլուխդ թաց արա և մտիր ջուրը. չըպէտք է ջուրը նետւել գլխիդ վրայ: Հէնց այս է պատճառը որ շատերը խեղդւում են: Քրումը մի տեղ չըպէտք է կանգնել, ընդհակառակը պէտք է քանի կարելի է շատ շարժւել, լողալ, ման գալ և այլն: 10—20 րոպէից աւելի չէ կարելի լողանալ: Հէնց որ մարմնին պատում է սարսուռ, իսկոյն պէտք է ջրից դուրս գալ և հագնուել: Ծանրը հիւանդութիւններից յետոյ թոյլ մարդիկ պէտք է լողանան միայն շատ տաք եղանակին: Եթէ մարմինը տաքացած է կամ քրտնած, անպատճառ պէտք է հովանալ ջուրը մտնելուց առաջ:

Երբ մարդ շուտ շուտ է լւացւում, ոչ թէ միայն

կեղտն է կաշուցը հեռանում և մաքրում են նրա ծածկած ճակոտիկները, այլ միաժամանակ և կաշին է ամրանում. Տաք ջրով լանալը մեր մարմինը աւելի լաւ է մաքրում, քան թէ պաղ ջուրը. կեղտը աւելի շուտ է հեռանում և սապոնը աւելի հեշտ փրփրում տաք ջրում, բայց տաք ջուրը առաջացնում է արիւնի սաստիկ համախառնութիւն և շատ է թուլացնում ու փափկացնում մեր մարմինը, մանաւանդ եթէ մարդ ամեն օր լացի տաք ջրում. Տաք լացումից, տաք լողարաններից (վաննա) և տաք բաղանիքից յետոյ պէտք է մարմինը կամաց-կամաց հովացնել և աշխատել չըմբել: Աւելորդ է աւել, որ ամեն մի լացելուց յետոյ պէտք է մարմինը չորացնել մաքուր չարձաւով, երեսրբիչով և այլն:

Բաւական չէ շուտ շուտ մարմինը լանալ որ մաքուր լինի, հարկաւոր է և, ի հարկէ, քանի կարելի է շուտ շուտ փոխել ներքին սպիտակեղէնը: Ով հարող է, պէտք է փոխել իր սպիտակեղէնը գոնէ շաբաթը մի անգամ: Ով Ֆիզիքական աշխատութիւնով է զբաղուում, լաւ կանէ թէ գիշերը ուրիշ փոխնորդ ունենայ, որը յետոյ օրուայ ընթացքում օդափոխ պէտք է անել: Օրուայ ընթացքում փոխնորդը ծծում է կաշու գոյորշին և նրա արտադրութիւնները, որոնք շուտ են փտում, սրանից է առաջանում ոտների և կոնատակերի վատ հոտը, սրանից է և որ կաշին սկսում է լզբել և ծածկել զանազան բշտիկներով:

4) Բերանը և կոկորդը մաքուր պահիր, ամեն առաւօտ և երեկոյ, նմանապէս և ամեն մի բան ուտելուց, ողողիր լաւ նրանց. սրանով միայն կարելի է ազատել ատամների զանազան հիւանդութիւններից, Իսկապէս հարկաւոր է ատամները մաքրել ամեն բան ուտելուց յետոյ, էն էլ լաւ պէտք է մաքրել: Յամենայն դէպս պէտք է ատամները մաքրել գոնէ օրը մի անգամ—առաւօտը: Ատամների վրձինը շատ կոշտ չըպէտք է լինի, բայց և շատ փափուկները և գուտապերչից շինածները չարձար չեն, որովհետեւ սրանք լաւ չեն մաքրում ատամները կերակուրի մանր կտորներից:

5) Քանի կարող ես շատ շարժումներ արա՛ բաց օդում:

6) Ձատ տաք մի հագնիր: Գլուխդ միայն թեթեւ ծածկիր, իսկ վիզդ երբէք չըծածկես:

7) Մարմինդ շատ պինդ չըսեղմես (կորսէտով, գօտիկով կամ կապիչներով):

8) Ոտնամանդ պէտք է ոտիդ ձեւը ունենայ: Բարձր կրունկները վնաս են, լաւ է որ դրանք լինեն ցածր և լայն:

9) Երբէք չըմնաս թաց գուլպաներում, կամ ոտնամաններում, կամ թաց հագուստում, քանի կարող ես շուտ հանիր նրանց և հագիր չորը:

10) Զուգաւոր եղիր թէ ուտելիքի, թէ խմելիքի ժամանակ: Մի գործածիր փչացած և դժւարամարս կերակուր, նմանապէս և քաղցրեղէն. մանաւանդ փոքր երեխաներին չըպէտք է տալ քաղցրեղէն: Սովորիր հասարակ ուտելիքի և օրուայ մէջ երեք անգամից աւելի մի ուտիր. մի գործածիր գրգռեցուցիչ նիւթեր, հում միս և խակ պտուղներ չուտես:

11) Վաղ քնիր և առաւօտները վաղ զարթիր: Չա-

տերն ունին վատ սովորութիւն զարթնելուց էլի մի փոքր ժամանակ մնալ անկողնում: Սակայն ով միշտ մտաւոր աշխատութիւնով է զբաղուում, հէնց զարթնեց, իսկոյն պէտք է թողնէ անկողինը, ապա թէ ոչ անկարող կըլինի աշխուժութեամբ սկսել իր զբաղմունքը:

12) Քնելուց առաջ լըխանգարես քո գիշերուայ հանգստութիւնդ որևէ ծանր մտաւոր կամ ֆիզիքական աշխատութիւնով:

13) Գիշերուայ մտաւոր աշխատութիւնը և երեկոյեան շատ ուշ արթուն մնալը վնաս է բերում չիշուութեանը, որովհետեւ աշխատող ոչժը առաջանում ու աճում է միայն լիակատար հանգստի և առողջ—երազներէից ազատ խորքնի՛ կամանակ. սրա համար է, որ առողջապահութեան քեզ առաջարկած գլխաւոր պահանջներից մինն էլ սա է՝ վաղ պառկիր, վաղ էլ վարթնիր, հէնց որ բունը քեզ կազդուրել է: Քնի տեղութիւնը, հասակի համեմատ, շատ զանազան է՝ սրա բնականը (Նօրմա) պէտք է լինի՝ ծծի երեխաների համար՝ 16—20 ժամ. փոքր 10—12 տարեկան երեխայոց համար—9 ժամ. պատանիների համար—8 ժամ. մեծերի համար 6—7 ժամ.

ԲՃ. Արաւեստ Ելիսուս

ԲՃՅԿԻ ՊԱՐՏԵՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պետերբուրգի բժշկական ընկերութեան փոխադարձ օգնութեան վարչութիւնը վերջին ժամանակները կազմակերպեց մի շարք ժողովներ հասարակութեան ներկայացուցիչների մասնակցութիւնով: Բժիշկների կացութեան վերաբերեալ մի քանի հարցեր քննելու համար հերթական խնդիր դարձրեց բժիշկների պատասխանատուութեան հարցը: Վերջին հարցի քննադատութեան մէջ մասնակցեցին և մեր ակաւաւոր բժշկական ուժերը՝ սենատոր Ն. Ս. Տազանցը, ուսուցչապետ Ա. Ն. Վուլֆերտը, ուսուցչապետ Ի. Ե. Փոյնիցկին, Դ. Դ. Զեդլովսկին և Դ. Ա. Դրիլը:

Բժիշկների պատասխանատուութեան բոլոր դէպքերի շարքում (տարափոխիկ հիւանդութեան մասին չըջատնել, հիւանդին այցելութեան չըգնալ, բժշկութեան մէջ գործած սխալմունքը) միշտ աւելի վէճ է չարուցանում հիւանդի պահանջով բժշկի այցելութիւնից հրաժարելու պատասխանատուութիւնը Այս հարցի մէջ բժիշկների և իրաւաբանների կարծիքները բոլորովին իրարից տարբեր են և շատ անգամ, թէ ջակջոկ բժշկական ընկերութիւններ և թէ բժշկական խորհուրդը միջամտել են պատժական կանոնադրութեան 872 *) յօդուածը փոփոխելու հա-

*) Պատժական օրինադրքի 872-դ յօդուածը՝ «Պրակտիքից դեռ ձեռք չըվերաւնող բժիշկը, ակուշօրը (մանկաբարձ բժիշկ), անդամահատը, Ֆելշէրը, մանկաբարձուհին և նրանց նման մասնագէտները, եթէ հիւանդների հրաւիրանաց համաձայն, առանց օրինական արգելադրութ պատճառ ունենալու, չայցելեն նրանց օգնութիւն հասցնելու համար, ենթարկուում են, առաջին անգամը—դրամական տուգան-

մար, բայց մինչև օրս այդ միջամտութիւնները չեն չարգ-
ւել:

Իրաւաբանները պահանջում են այդ յօդուածը պահ-
պանել, որպէս զի ժողովուրդը ապահոված լինի իր ժա-
մանակին բժշկական օգնութիւն ստանալու կողմից. բժշկի
մասնագիտութիւնը իր էութիւնով բժշկի վրայ առանձին
պարտականութիւններ է դնում, և նրանց լրացնելու հա-
մար՝ անկարելի է չապաղում թող տալ, զանցառութեան
տւած ժամանակը ոչինչով չէ կարելի վարձատրել և շատ
անգամ բժշկի իր ժամանակին չըհասնելուց կեանք է
կախւած: Որովհետև տէրութիւնը ինքը կարող չէ կազ-
մակերպել պաշտօնական ժամանակ բժշկական օգնութիւն
հասցնելու գործը, ուստի բժիշկների վրայ, այսպէս ա-
սած, բնական (НАТУРАЛЬНЫМ) հարկ է դնում և զոհում
է մի դասակարգի շահերը ամբողջ տէրութեան բարօրու-
թեանը, որովհետև ինչպէս ասել է Ս. Ն. Տազանցը,
կարօտութեան համար օրէնք չըկայ գրած: Այս տեսակէ-
տից կարևոր է այն օրէնքի գոյութիւնը, որի պահանջով
բժիշկը պէտք է ներկայանայ նրան կանչելիս, եթէ չար-
գելի պատճառներ չունի (ինչպէս ասւած է նոր օրինա-
գրքի նախագծի մէջ) բացասելու համար:

Վերջին եզրակացութեան, պարտաորեցուցիչ սպառ-
նալիքի պորուժիւնով հիւանդներին այցելելու, ջերմ ընդ-
դիմադրութիւն են ցոյց տալիս բժիշկները: Իրանց երդ-
ման մէջ բժիշկները խոստանում են ոչ ոքի ոչ մի պատ-
ճառով չըբացասել բժշկական օգնութիւն տալը «որքան
զա հնարաւոր է ու համապատասխան իրանց ուժերին և
հմտութեանը»: Ռուսիայում բժշկական դասակարգը, գու-
ցէ, բաց առած հատ-հատ անձնաորութիւններ, կատա-
րում է սրբութեամբ և ազնուութեամբ: Բայց շատ անգամ
բժիշկներին առաջարկած պահանջը գերազանց է թէ նրա
ուժերից և թէ նրա հմտութիւնից: Փոքր ի շատէ ընդար-
ձակ փորձառութիւն ունեցող բժիշկը, որը միևնոյն ժա-
մանակ հիւանդանոցի մէջ էլ է աշխատում, 10—11 ժամ-
ւայ աշխատաւոր օր անցկացնելուց յետոյ, հանգստանա-
լու իրաւունք ունի, բայց և այդպիսի իսկ բժիշկն էլ,
երբէք, մասամբ իր սեպհական շահի կէտից, չի բացասի
զժուար հիւանդի մօտ գնալուց, Բայց գիշեր ժամանակաց
կոչումներից մեծ մասը, որոնք, գրեթէ, բացառապէս ի
նկատի ունի 872-րդ յօդուածը, ինչպէս ստուգւած է փոր-
ձով, լինում են կեղծ իրարանցումն, որի աստառը ժողո-
վրդի նոյն համոզմունքն է, թէ նա իրաւունք ունի կան-
չել բժշկին գիշեր ու ցերեկ, երբ և ուզենայ, կամ կան-
չում են բժշկին հիւանդութեան առաջին իսկ չնչին երե-
ւոյթները նկատելիս կամ դրա հակառակ, սպասում են
ինքնաբուժութեան. հիւանդութիւնը բարձի թողի են ա-
նում և յետոյ գիշերայ մէջ տեղը զարթեցնում են բժիշ-
կին, որը իմանում է զարմանալով, թէ հիւանդը արդէն

քի ոչ աւելի տասն բուբուռ, երկրորդ անգամը—ոչ աւելի չի-
սուն և երրորդ անգամը—ոչ աւելի հարիւր բուբուռ, իսկ նրան-
ցից ծառայութեան մէջ գտնւողը, բացի օրինադրած դրամական
տուգանքների ենթարկելուց, կարող է այդպիսի կրկնուող ան-
կանոնութիւն և դէպի տառապող մարդկութիւնը չարգանք չը-
ցոյց տալու համար, պաշտօնական լինել:

երեք շաբաթ է ինչ հիւանդ է. Այժմեան բժշկականու-
թեան մէջ տիրող մասնագիտութիւնների բաժանելու ուղ-
ղութիւնը կարող է առաջ բերել և մի այլ կողմից (ընդ-
հարում), մասնագէտ հոգեբույժին զարթեցնում են գի-
շերը գեթտերիտով հիւանդ երեխայի մօտ գնալու. նրա
ամենալաւ գործը կըլինէր խորհուրդ տալ, որ մի ուրիշ
բժշկի դիմեն, բայց օրէնքի պահանջով նա պարտական է
գնալ հիւանդի մօտ, որին ոչ մի օգնութիւն չէ կարող
հասցնել: Յամենայն դէպս, այդ օրէնքի պահանջութիւ-
նը, որ վիրաւորական է բժշկական դասակարգին, նպա-
տակի չէ հասցնում. դրան ապացոյց է այն փաստը, որ
նրա գործադրութիւնը շատ հսգիւ է պատահում: Ս. Ն.
Տազանցը ասում է, որ 13 տարւայ ընթացքում նա չի-
շում է ընդամենը 2—3 այդ տեսակ գործեր, միևնոյն ժա-
մանակ այդ դէպքերը չափազանց այնպիսի ձև ունէին,
ինչպէս, սխալ կըլինէր, այդպիսի դէպքերի քչութիւնը
վերագրել իսկապէս 872-րդ յօդուածի գոյութեանը, օրէն-
քից երկուդ կրելուն. դրա համար բաւական է այդ յօդ-
ւածների չափի հետ ծանօթանալ—առաջին անգամ դրա-
մական տուգանք ոչ աւելի տասն բուբուռ, երկրորդում—
չիսունից և երրորդում հարիւր բուբուռ: Այստեղ պար-
տաւորում ենք թող տալ մէկն ու մէկը՝ կամ բժիշկները
բաւականաչափ զոհացուցիչ կերպով են կատարում իրանց
ակադեմիական չանձն առած պարտականութիւնները կամ
օրէնքը չըգործադրելու համար բժիշկները բաւականին օ-
րինական պատճառներ ունին: Թէ մէկ և թէ միւս դէպ-
քում օրէնքը իր գոյութիւնը պահպանելու իրաւունք չու-
նի, որովհետև այս դէպքում անձոնի վարմունքները
կարելի է միշտ չարմարեցնել օրինակ այն օրէնքին, թէ
հիւանդը թողած էր առանց օգնութեան:

Այն ինչ, այդ օրէնքի բարոյական նշանակութիւնը
բժիշկների համար շատ մեծ է. նա նշանաբանում է ժո-
ղովրդի հայեացքը բժշկի վրայ, որպէս չարտենական օ-
րսպահի, որպէս ժողովրդի մշտական ստրուկի վրայ, նրա
գործունէութեանը մտրակի տակ կատարող աշխատու-
թեան կերպարանք է չտակացնում:

Չըկայ ոչ մի պրոֆեսսիա, որ այդ կողմից այնպիսի
ստորացնող ուղղութիւն ունենայ, ինչպէս է բժշկի պրո-
ֆեսսիան: Մեզ յայտնի են շատ դէպքեր, երբ իր ժամա-
նակին հասցրած իրաւագէտի օգնութիւնից կախում ունի
բառի բուն մտքով ամբողջ մի ընտանիքի կեանք. մենք
իրաւունք ունինք, օրէնքի վրայ հիմնելով հարկադրել
այս կամ այն իրաւաբանին, իր կամքին հակառակ, այդ
գործի մէջ մասնակցելու համեմատութեան համար մատու-
ցոյց են լինում ձրի պաշտպաններին, բայց այնտեղ ունի
գործ ունինք մի առանձին երդւեայ հաւատարմատարնե-
րի կազմի հետ, շատ ձրի պաշտօններ կատարում են և
բժիշկները:

Նոյն իսկ չիշեայ օրէնքի գոյութիւնը կաշկանդում
է ժողովրդի մէջ զարգանալու իր ժամանակին բժշկական
օգնութիւն նախապատրաստելու հոգսը. ոմանք հասարա-
կութեան մէջ հասնում են այն դրութեան, որ ամենա-
լուրջ կերպով առաջարկում են «Պետերբուրգից համեն մի
քաղաքաբաժնի բժիշկներին իրար մէջ հերթապահութիւն

հիմնել գիշերները հիւանդներին այցելելու և մի որոշ օր հերթապահ լինել գիշերը իր տանը, իսկ այդպիսով հասարակութեան վրայից բարձուում է ամեն մի հոգս իր մասին, ըստ որում նրա համար պէտք է հոգան կրկին նոյն բժիշկները: Իսկ երբ բժիշկները այդպիսի հիմնարկութիւններ են կազմակերպում, այդ հիմնարկութիւնները խորտակում են իր պահպանութեան համար միջոց չունենալու պատճառով. այսպէս Պետերբուրգի գիշերապահութեան ընկերութիւնը, ինչպէս լուում է, պէտք է ժամանակաւորապէս ընդմիջէ իր գործունէութիւնը: Եւ ինչ է տրուում դրա փոխարէն բժշկին, օրէնքը նրան չէ պաշտպանում մրցումից, թոյլ տալով ժողովրդական հեաքիմութիւնը. մշտապէս ժողովրդական առողջութեան պահպան, մշտապէս տէրութեան շահերը պաշտպանող, բժիշկները չեն շահում տէրութեան պաշտօններ ստանալու իրաւունքով, նրանց աշխատանքը ժողովուրդը վարձատրում է բոլորովին շնչին դնով:

Ճակատամարտելով 872-դ յօդուածի դէմ, բժիշկները պատերազմում են բժշկական գասակարգի արժանաւորութեան և պատւի համար. 872-դ յօդուածի մէջ զրուած հիմունքը պէտք է ենթարկւի վերաքննութեան և բժշկին պէտք է թոյլ արւի իր պարտաւորութիւնները ազատօրէն կատարելու և ոչ թէ օրէնքի սպառնալիքի ճնշման տակ:

Ժամ է, վաղուց արդէն ժամ է, բժշկական պրոֆեսիային դառնայ իսկապէս ազատ պրոֆեսիա և ռուսական բժիշկները իրանց գործունէութիւնով, կարճօք, վաստակել են արդէն, վստահութիւն հասարակութեան և օրէնքի կողմից:

Բժշկապետ Գ. Գ.

(„Новости“, № 50).

Մասնախօսութիւն

Բժ. Ա. Բուդուղեան. „Առողջ հոգին առողջ մարմնի սէջ“ 54 երես գ. 10 կ. Ս. Պետերբուրգ—Պուշկինեան արագ տպ.

Այս փոքրիկ գրքոյկը իր մէջ պարունակում է հիւանալի մտքեր մատաղ սերունդը առողջ կրթելու համար: Իսկ մարդիկ ամեն ինչի մի առանձին խնամք են տաճում, թէ մատաղ բնութիւն, կենդանիներին, բաց ինչ վերաբերում է իրանց սերունդին՝ բոլորովին աչքաթող են անում: Վեանքի արդի պայմանները այնքան են բարդացել, կեանքի կռիւը այնքան է անուշաքար գարձել, որ նրա դէմ մաքառելու համար հարկաւոր է մեծ ոյժ, ոյժ ֆիզիքական և մտաւոր: Այս երկու ոյժերն էլ պէտք է միշտ միւրը միւրի հետ համերաշխ լինին, եթէ միւրը տիրապետէ, միւսը կը կճուի: Մինը միւսից բաժանողը— անխնայ պատժում է: Մեր ժամանակներում գործնական տեսակէտը այնքան է տիրել մեզ, որ զօռ ենք տալիս միայն և միայն մտաւոր զարգացման, իսկ ֆիզիքական զարգացումը բոլորովին աչքից թողել ենք: Երկար ժամանակների այս աններելի գնանցումութիւնը տեւել են և

անընդհատ շարունակում է տալ իր պտուղները, մեր սերունդը քանի զնում, այնքան նւագանում է, այնքան այլասերում: Միայն մտաւոր զարգացումը— սնուչադիր թողնելով ֆիզիքականը, մաշում է մեր ուզեղը, մեր նեարդային համակարգութիւնը. արդի մարդը վաղաժամ հասունանում է, վաղաժամ էլ թաւամում, թողնելով իր ապագայ սերունդին ահարկու, ոչնչացնող ժառանգութիւն: Սակայն բնութիւնը— այս մեր ամենալաւ խնամատարը— առատօրէն մեզ տալիս է իր բարիքները՝ մաքուր օդ, կենդանացուցիչ արեւ և յոյս և խելք ու բանականութիւն, որ այս բոլորից օգտուենք: Բայց ով է լուում նրա իրատներին:

Բժ. Ա. Բուդուղեանի այս գրքոյկը հետաքրքրութեամբ է կարդացւում. լեզուն հանրամատչելի է: Իր մի շարք հանրամատչելի բողբուլներով ահա՛ երկար տարիներ բժ. Բուդուղեանը ծանօթացնում է հասարակութեանը առողջապահութեան հետ. նա մեր ուսումնական— ժողովրդականացնողների մէջ բռնում է մի պատկառելի տեղ:

Բժ. Ա. Շխեան

ԲՅՅՎԱԿԱՆ ԲՐՈՆԻԿՈՆ

Բժեկական մի նոր մեքենայ.— Լրագրներում կարդում ենք, որ մի վերին աստիճանի սրամիտ և օգտակար գործիք է հնարել բժշկապետ Paul Michel: Այդ գործիքը անդամահատական (хирургический) կարի փոքրիկ մեքենայ է, որը միջոց է տալիս մի րոպէում կարել կաշւի վէրքը 0,3 մետր երկարութեան: Չախ ձեռքով անդամահատը մօտիկացնում է իրար վէրքի եզրերը, իսկ աջ ձեռքով մօտիկացրած եզրերի վրայով շարժում է մեքենան, որը կարում է վէրքի կտրածքը: Կարը արագ կատարելու պատճառով այնևս կարիք չըկայ հիւանդին խորոզվորմով քնացնելու, որ ի հարկէ շատ մեծ օգուտ ունի:

Ինչի՞ց է կախւած բուժը.— Այս հարցին իբրև պատասխան՝ բնախօսութիւնը առաջարկում է զանազան ենթադրութիւններ, որոնցից այնուամենայնիւ, ոչ մէկը չէ կարելի ընդունել իբրև գոհացնող մեկնութիւն: Վերջին ժամանակը սկսում է իրան ճանապարհ բաց անել մի նոր հայեացք: Goyet գտաւ, որ մի զէպում լետարգիական բուժը կախումն ունէր ուղեղի այսպէս կոչուող երրորդ ստամոքսի պատերի և սիւրիական անցքի հիւանդոտ փոփոխմունքից: Անցեալ տարի մի 18 տարեկան աղջիկ վախճանեցաւ Պարիզի Salpêtrière հիւանդանոցի մէջ, եօթը ամիս լետարգիք քնի մէջ գտնւելուց յետոյ: Անգամահատութիւնը այս զէպումն էլ յայտնեց չիշեալ ուղեղի մասերի փոփոխութիւնը: Այս բոլորը ստիպեց բժշկապետ Raphael Dubois-ին քնի կախումը գլխի ուղեղի մէջ փնտռել: Սկիւռների վրայ արած փորձերը ցոյց տւին, որ ուղեղի բնի մէջ կայ մասնաւոր մի կենդրոն, որը զեկավար է քնին: Եթէ արիւնի մէջ հաւաքւել է որոշ չափով անխաթթւելի գազ, մեր չիշած կենդրոնը ընդարմանում է

և առաջանում է բուն: Քնի ժամանակ այդ գազը քանի գնում անելանում է: և կենդանին անելի խոր քնի մէջ է ընկնում: Վերջապէս այնքան գազ է հաւաքւում, որ քնի կենդանը գրգռւում է և բունը ընդհատուում է:

Եթէ շարունակեալ հետազոտութիւնները հաստատեն Dubois-ի լծօրիան, այն ժամանակ կարելի կըլինի շնորհաւորել բնախօսութեանը նշանաւոր գիտական յաջողութիւնով:

Կաթը ներկայանում է բարակացաւի վարակման անենադիսաւոր սկզբնապատճառը: Փոքր ի շատէ երկարատե եփ տարուց կաթի մէջ սպանում են բարակացաւի բակտերիաները: Բայց չայտնի է, որ շատերը չեն մարսում եփ տաած կաթը, բացի այդ հում սերը և իւրը պատրաստում են հում կաթից և այդ պատճառով նրանց մէջ չաճախ գտնւում են բարակացաւի բակտերիաներ: Կարը ախտահանելու իդէպին այն է, որ սպանին նրա մէջ գտնւող բակտերիաները, առանց նրա համը փոխելու և նրանից հում սեր ստանալու որակութիւնը ոչնչացնելու: Այդ կողմից մեծ նշանակութիւն ունի Russel-ի և Hastings-ի սրւած տեղեկութիւնը: Այդ հեղինակները հասել են այն եզրակացութեան, որ եթէ փակ և ախտահանած ամանի մէջ կաթը պահենք 20 րոպէ Յելսիի 60° տաքութեան ազդեցութեան տակ, կաթը չէ փոխում իր բաղադրութիւնը, չէ կորցնում հում սեր տալու որակութիւնը, իսկ նրա մէջ գտնւած բարակացաւի բակտերիաները ոչնչացած են լինում:

Գիտնականի հետոսական փորձը.— Յայտնի է, որ նորերս մեռնող առողջապահագէտ Պետտենկոֆեր ինքն իր վրայ փորձ էր արել խոլերային բացիլների անվնասակարութեան մասին:

Նա բացիլները կուլ էր տալիս կերակրի հետ, որպէս զի ապացուցի, թէ նրանք ինքն ըստ ինքեան անվնաս են և չեն կարող վարակման միջոց ծառայել: «Neues Wien Tagbl.» այդ փորձի հետևեալ մանրամասնութիւններն է առաջ բերում: Միւնխենում բժշկական ընկերութեան ժողովի մէջ, խոլերայի բացիլների մասին դոկտոր Փրոբենիուսի զեկուցումից յետոյ, վեր է կենում իր տեղից Պետտենկոֆերը և չայտնում է՝ «Իմ կարծիքով, մենք հաստատ հիմք ունենք խոլերայի կանտագեոզ կերպով տարածելու բարոգութիւնը բոլորովին հերքելու: Ես պէտք է չայտնեմ, որ Կոխի իմաստասիրութիւնները երբէք չըկարողացան իմ մասնաւոր հայեցակէտը խախտել: Կարելի էր փորձ անել, թէ կարող են իրաւի Կոխի բացիլները խոլերայի հիւանդութիւն պատճառել (լուեցին ծիծաղկոտ բացակսնչութիւններ):

Ես չօժարութիւնով առաջարկում եմ իմ անձս այդ փորձի համար: Ես պատրաստ եմ կուլ տալ Կոխի բացիլները և համոզւած եմ, որ բացի ժամանակաւոր և տեղական թեթև տկարութիւնից, ես խոլերայով երբէք չեմ հիւանդանալ: Այդ փորձը գիտութեանը և մարդկութեանը այնքան օգուտ կընծայէ, որ մի մարդու կեանքը այդ

օգտի հետ համեմատած, չնչին բան է: Այդ մահը անելի մեծ քաջութիւն կըհամարուի, քան թէ մահը պատերազմի դաշտում: Ես չուով եմ, որ իմ օրինակիս ուրիշ հետևողներ էլ կըգտնուին: Եւ իրաւ Պետտենկոֆերը խմեց խոլերային բացիլներով խառնւած ըմպելիքը առանց որ և է իր համար նշանաւոր մի վտանգի:

Այլ եւ այլ

Վոդըլիխսը բժշկի դերում: Իրնքստ Բիւմը «Journal d'un Voudevilliste»-ի մէջ պատմում է, թէ ինչպէս նա մի անգամ պէտք է բժիշկ դառնար, և յաջողութիւնով բժշկի մի հիւանդի: Իրնքստ Բիւմը հաւատով չէր վերաբերում դէպի բժշկականութիւնը և հաւատ չէր բնծայում նրա մեծ յաջողութեանը: Ան ինչ է նա պատմում իր մասին, բժշկի դերում— բայց ոչ թէ բեմի վրայ, այլ կեանքի մէջ:

«Ես ճանաչում էի մի թատրոնական բժշկի, որը տանջւում էր ստամոքսի ծանր ցաւով: Նա իր կոլլեգներին տանի մօտ բժշկել էր, բայց առանց որ և է հետևանքի: Մի անգամ երբ այդ բժիշկը գանգատւում էր ինձ իր տանջանքների և անյաջող բժշկութեան մասին, ես ուզելով նրա հետ կատակել, պատմեցի, թէ ինչպէս իմ ազգականներիս մէկը տանջւում էր նոյն հիւանդութիւնով և նրան բժշկեց, իբրև թէ, մի ծերունի պիւլմոնիտով: Բժիշկը գլուխը թափ տուց և ժպտաց. «Ես չեմ հաւատում այդ բոլոր գիւլական հովիւների խորհրդաւոր միջոցներին», ասաց նա ինձ: Բայց և այնպէս նա միւս օրը չարաչար տանջանքների և ստամոքսի ցաւի ազդեցութեան տակ, կրկին վերադարձաւ նոյն բանի վրայ խօսելու և ասաց ինձ՝ «Ի հարկէ ես չեմ հաւատում հովիւների բժշկականութեանը, բայց բնութեան մէջ սրբան դեռ հրաշքներ կան: Պատմեցէք ինձ, ինչպէս, ինչով և ինչպէս էր բուժում հովիւր՝ ձեր ազգականին»: Ես շատ նեղ դրութեան մէջ էի, ըստ որում բոլոր այս պատմութիւնը հնարովի էր. վորձելու համար, թէ որքան հեռու է գնում մարդու ցանկութիւնը հաւատ ընծայելու վերաբերութեամբ և պատահաբար պատասխանեցի՝ «հովիւր պատերից նրան ամեն օր լուսնեակ գիշերը հաւաքած և եփած բանջարեղէն ուտել»: «Ինչ չիմար բան— ասաց դոկտորը:— «Ի հարկէ, պատասխանեցի ես— այնուամենայնիւ ազգականս առողջացաւ»: Մի քանի օրից յետոյ բժիշկը ինձ պատահելով, ասաց, «Ինչէք, որքան էլ զարմանալի թւաց, ես ինձ անհամեմատ լաւ եմ զգում, ես փորձեցի ձեր ասած հնարը...» — «Ինչ, իմ ազգականի վրայ գործ դրած հնարը»: — «Այո, և ես հիմա ինձ լաւ եմ զգում. դա միակ միջոցն էր, որը ինձ հանգստութիւն պատճառեց»:— «Իրաւ որ միակ, մասնեցի ես, վորդըլիխսը բժշկում է բժշկին»: Այս պատմութեան աղբ այն է, որ իմ ցոյց տաւ հնարով առողջացած բժիշկը, մի քանի ժամանակից յետոյ, երբ ես էլ հիւանդացայ, սկսեց ինձ միւնխոյն եղանակով բժշկել: Բայց ի հարկէ արդէն վարձով:

Լարխում (Թեսսալիա), պեղումներ անելիս, գտել են բժշկականութեան նախահայր Հիպոկրատեսի գերեզմանը:

Խմբագիր-հրատարակիչ՝

Տիգրան Մազարեան

Յ Ա Յ Տ Ա Ր Ո Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՕՐԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՐ ՀԻՌԱՆԴԱՆՈՅ
Բ. Ն Ա Ի Ա Ս Ա Ր Գ Ե Ա Ն Ի

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Հրահանգներին ընդունում են առեն օր
բացի կիրակի օրերից:

Ա Ա Մ Ա Օ Ս Ե Ն Ե Ր

- Տ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վի ա-
րուժութեան, վեներական (սիֆիլիս) եւ
ժիզանի. հ.
- Կ. Մ. Չիկովանի—9—10 ժ. այֆի, ներ
սին եւ նեարդային հ.
- Կ. Ի. Գոբլիե.—11—12 ժ. կանանց
եւ երեխայոց հ.
- Զ. Ի. Բարանասեանց—11—12 ժ. կա-
նանց եւ երեխայոց հիւանդ.
- Ա. Պ. Կարապետեանց—1—1 1/2 ժ. ներսին
եւ երեխայոց հ.

Օ Ր Ե Կ Ա Ն Ե Ր

- Ն. Ն. Մուսումբեկով—5—6 ժ. վիրաբու-
ժութեան եւ մորթու. հ.
- Ա. Ն. Զպալովսկի—6—7 ժ. նեարդային
(էէկարաբուժութիւն). վեներ. եւ մոր-
թու. հ.
- Փ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին
եւ երեխայոց հ.
- Բ. Ա. Նաւասարդեան—7 1/2—8 ժ.
- Վճար 50. Կ. չբաւորները ձրիւ Հա-
մախորհրդի (կոնսիլիումի) եւ օպերու-
ցիայի համար առանձին.
- Օ. Տ. Առանիտալի—սանր ծաղկահասու-
րեանք, բժշկական մարմնամաշտիքեանք
դիւնը 11—1 ժ.
- Հիւանդանոցի վերատեսուէ՛
Բժշկական Նաւասարդեան

ԲՏԶԿՊ. ՎՏԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

(Քրի, կոկորդի ականչի հիւանդութիւններ)
առ. 9—11 ժամը, երեկ. 5—7-ը.

ԲՏԶԿՊԵՏ ԱԻԵՏ. ԲԱՏԱՅԵԱՆ

Հիւանդների ընդունելութիւնը
առ. ժ. 10—12 երեկ. 5—7

ԱՐԱՐԱՏ

1901

Ա.Է.ՔՄԻԱԾԻՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒԻ
ՊԱՏՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ
Բաժանորդագրինն է Ռուսիայում 4
րուբլի, արտասահման 5 րուբլի:
Խնդրում ենք բաժանորդներին յայտնել
իրանց ճիշդ հասցէները.

Հասցէն՝ ՏՎ. ԶՄԻԱԾԻՆԻ. Կոմիտեյ
գրաֆիկական, արտասահ-
ման համար Rédaction de la Re-
vue «Ararat». Etchmiadzine (Cauc-
vase). 3—3

ԲՏ. Ա. ԶԻԵԱՆ
Վերամշինութեան փ. № 7.
Հիւանդներին ընդունում է ամեն օր
առաւօտը 9—11 ժամը
երեկոյնն 5—7 ժամը.
10—1

Խնդրում եմ ուղարկել ինձ այն
երգերը, որոնք տակաւին չեն տպա-
գրուած: Հասցէս. Բրոուերսը Գրիգ-
որիու Գրիգորիանց, Վճ. Բաքու.
2—2

ОТКРЫТА ПОДПИСКА
на 1901 годъ

(32-й годъ изданія)
на еженедельный иллюстри-
рованный
ЖУРНАЛЪ
со многими приложениями



Гг. подписчики „НИВЫ“ получают въ теченіе 1901 г.

художественно-литературнаго журнала „НИВА“ (около 1500
столбцовъ текста и 500 гравюръ и рисунковъ). Въ номерахъ
журнала, между прочимъ, появляются: 1) еще нигдѣ не на-
печатанныя произведенія

Д. В. Григоровича: „Очерки Венеціи“ и „Изъ записной книжки“ (характеристика
выдающихся соврем. русскихъ дѣятелей и анекдоты изъ
ихъ жизни); 2) рядъ статей со множествомъ рисунковъ, картъ и пр. подъ
заглавіемъ:

„XIX ВѢКЪ“. Эти статьи дадутъ читателю полную картину жизни истекшаго
столѣтія и составятъ отдѣльный роскошный томъ.

24 ТОМА

полн. собранія
сочиненій

Г. П. ДАНИЛЕВСКАГО

съ портретомъ, фансимию и биографически. очеркомъ. Полное собраніе соч. Г.
П. Данилевскаго, стоящее въ отдѣльной продажѣ 15 руб., будетъ отпе-
чатано на хорошо глазированной бумагѣ и будетъ приложено при „Нивѣ“
въ теченіе одного 1901 года подъ заглавіемъ: „Сборникъ нивы“, въ 24 то-
махъ — по два тома въ мѣсяць, такъ что „Сборникъ Нивы“ 1901 года, по
количеству матеріала для чтенія, значительно превзойдетъ „Сборники“
всѣхъ прежнихъ лѣтъ.

Назовемъ здѣсь только крупнѣйшія изъ произведеній Данилевскаго: I. ГОМНЫ:

- 1) Бѣглые въ Новороссіи, въ частяхъ. 2) Воля, въ 2 ч. 3) Новая мѣста, въ 2 ч.
- 4) Девятый вальс, въ 3 ч. 5) Миревичъ, въ 3 ч. 6) Черный годъ, въ 3 ч. 7.
- Восемьсотъ двадцать пятый годъ (отрывки) — II. ИСТОРИЧ. РОМАНЫ: 8) На
- Индію при Петѣ I, въ 2 ч. 9) Княжна Тапананова, въ 2 ч. 10) Потемкинъ на
- Дунай, 11) Сожженная Москва, въ 2 ч. — III ИСТОРИЧ. ПОВѢСТЫ: 12) Уман-
- ская рѣзня. — IV. ПОВѢСТЫ: 13) Не вытанцовалось, въ 2 ч. — Затѣмъ слѣ-
- дуетъ множество V РАЗСКАЗОВЪ и ОЧЕРКОВЪ, отдѣльныхъ или подъ общими
- заглавіями, напр.: „Семейная старина“, „Слобожане“, „Святочные вечера“, „Изъ
- литературныхъ воспоминаній“, „Украинская старина“ и проч. VI. СЪИХО-
ВОРЕНІЯ — VII. ПИСЬМА ИЗЪ ЗАГРЪНИЦЫ — VIII. ДРАМЫ ШЕНСПИРА: „Цимбелинъ“
и „Жизнь и смерть короля Ричарда Третьяго“. Переводы. — IX. МЕЛКІЯ
- СТАТЬИ и пр., и пр.

12 КНИГЪ „ЕЖЕМѢСЯЧНЫХЪ ЛИТЕРАТУРНЫХЪ ПРИЛОЖЕНІЙ“,
содержащихъ романы, повѣсти, популярно-научныя и
критическія статьи и проч. — современныхъ авторовъ.

12 № „ПАРИЖСКИХЪ МОДЪ“, выходящихъ ежемѣсячно и содер-
жащихъ до 300 модныхъ гравюръ по фасонамъ лучшихъ ма-
стеровъ.

12 ЛИСТОВЪ рукодельныхъ и вышивныхъ работъ (около 300) и до
300 чертеней выкозены въ натуральную величину, вы-
ходящихъ ежемѣсячно.

„СТЫШОЙ КАЛЕНДАРЬ“ на 1901 г., печатанный красками.

ПОДПИСНАЯ ЦѢНА на годовое изданіе со всѣми приложениями:
БЕЗЪ ДОСТАВКИ: 1) въ СІЕ. — 5 р. 50 к. 2) въ МОСКВѢ, въ КОНТ. Л. П.
ПЕЧКОВСКОЙ (Петровск. линія) — 6 р. 25 к. 3) въ ОДЕССѢ, въ ЕН. МАГ.
„ОБРАЗОВАНИЕ“ (Ришельевск. № 12) — 6 руб. 50 коп. СЪ ДОСТАВКОЙ
ВЪ С.-ПЕТЕРБУРГЪ — 6 руб. 50 коп. СЪ ПЕРЕСЫЛКОЮ ВО ВСѢ
МѢСТНОСТИ РОССІИ 7 руб. За границу — 10 руб.

Требованія просятъ адресовать: въ въ С.-Петербургѣ, въ Главную Конто-
ру журнала „НИВА“ (А. Ф. МАРКСУ). Малая Морская, д. № 23. 2—4